



ԾՆՈՒՆԴ Տ. Մ. Յ. Ք.Ի (ճաշոց էջ 2)



ԺԱՍԱՄՈՒՏ

Աստուածածին, քեզ հռչակելով՝ կ'երկրպագէ ուղղափառ եկեղեցին, որովհետեւ այն, որուն չէին համարձակեր նայիլ բազմաչեայ քերովբէները, հրանիւթ գահերն ու վեցթեւեան սերովբէները, դուն՝ իբր աղախին արգանդիդ մէջ առանց սերմի կրեցիր Տէրը եւ իբր մարդ՝ ծնունդ տուիր բոլորիս Աստուծոյն, քեզմէ մարմին առած անըմբռնելի Բանին, որպէսզի աշխարհի փրկութիւն եւ մեզի կեանք պարգեւէ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ_ԾՆՆԴԵԱՆ ԱԿ

Անձս կը փառաւորէ Տէրը. եւ հոգիս կը ցնծայ Աստուծոմով՝ իմ փրկիչովս:
Մենք օրհնութեամբ կը մեծացուցանենք սուրբ Աստուածածինը:
Աւետաբեր հրեշտակը անտեսց ծնող Փրկիչը սուրբ Կոյսէն:

Ան ըսաւ. «Ուրախացիր շնորհքներով լեցուն, որովհետեւ Տէրը տէրերուն քեզի հետ է»:

ՄԵՍԵՂԻ (Սղմ. 2, 7 եւ 1)

Ինքը Տէրը ըսաւ ինձի, թէ դո՛ւն ես իմ Որդիս եւ ե՛ս այսօր քեզ ծնայ:
Հեթանոսները ինչո՞ւ կը խռովին եւ ինչո՞ւ սնտոյի բաներ կը մտածեն ժողովուրդ-
ները:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՀԻՄԵՐԸ

Պօղոս Առաքեալին Տիտոսի ուղղուած թուղթն
(Տիտ 2, 11-15)

Որովհետեւ Աստու-
ծոյ շնորհքը, աղբիւր՝
մարդոց փրկութեան
յայտնուեցաւ եւ մեզի
կը սորվեցնէ հրաժարիլ
ամբարշտութենէ եւ
աշխարհային ցանկու-
թիւններէ, ապրիլ այս
աշխարհի վրայ զգաս-
տութեամբ, արդարու -
թեամբ եւ աստուածա-
պաշտութեամբ, սպա-
սելով երանելի յոյսին
եւ փառքի յայտնու-
թեան, մեր մեծ Աստու-
ծոյն եւ Փրկչին Յիսուս
Քրիստոսի, որ ինքզինք



զոհեց, որ փրկէ մեզ անօրէնութենէն եւ
սրբացնէ սեփական ժողովուրդ մը՝ ևս-
խանձախնդիր բարի գործերու մէջ: Այս-

պէս խօսե՛, յորդորե՛ եւ յանդիմանե՛ իշ-
խանութեամբ, որպէսզի ոչ ոք քեզ ար-
համարիէ:

Ալէլուիա, Ալէլուիա,

Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ, ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ Տէրն է:
Արուսեակը դեռ գոյութիւն անգամ չունէր, երբ ես քեզ արդէն ծնած էի:

(Դուկ 2, 11 եւ Սաղմոս 109, 3բ)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍՏՈՍԻ

(Ղուկ. 2, 1-7)

Այն օրերուն, Օգոստոս Կայսրի կողմէ հրամանագիր մը ելաւ, մարդահամարը ընելու ամբողջ աշխարհի վրայ: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ, երբ Կիրենիոս կուսակալ էր Սուրիոյ: Ամենքը կ'երթային մարդահամարի, իւրաքանչիւրը իր քաղաքը: Յովսէփ, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն մեկնեցաւ դէպի Զրեաստան, Դաւիթի քաղաքը՝ Բեթղեհէմ, որովհետեւ Դաւիթի տունէն ու սերունդէն էր, արձանագրուելու համար իր կնոջ՝ Մարիամի հետ, որ յղի էր: Մինչ



այնտեղ կը գտնուէին, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ որդին, փաթեց խանձարուրներով ու դրաւ մտուրիւն մէջ, որովհետեւ իջեալնի մէջ տեղ չկար անոնց համար:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ

2018-ին, համայն մարդկութիւնը ինչպէ՞ս պիտի ընդունի ԱՒԵՏԻՍԸ Ս. ԾՆՆՈՒՆԵԱՆ: ԱՒԵՏԻՍԸ ինչպէ՞ս պիտի ներգործէ իւրաքանչիւրիս սրտին ու հոգիին մէջ.

- Մենք՝ հաւատացեալներս, որ վարժ ենք այս յատկանշելի գիշերը գիրար տեսնել՝ եկեղեցիներուն մէջ:

- Անոնք, որոնք պիտի նախընտրեն քնանալ քան եկեղեցի երթալ եւ տօնել ԾՆՈՒՆՈՂը, մերժելով ԱՒԵՏԻՍԸ եւ Չայն նկատելով հնամենի, հեքիաթային ու մաշած սովորութիւն մը կամ անցեալի դրուագներէն դրուագ մը:

- Անոնք, որոնք հեռատեսիլի փոխանցած ահաբեկչական լուրերը իմանալով՝ պիտի ապրին վախի ու դողի ժամեր եւ իրենք իրենց հարց պիտի տան ԾՆՆՈՒՆԵԱՆ ուրախութեան մասին, թէ ան երա՞գ է կամ իրականութիւն:

Այս ցնձալի օրը, հրեշտակները կըրկին անգամ կ'աւետեն մարդկութեան. «Մի՛ վախնաք, որովհետեւ պիտի աւետեմ ձեզի մեծ ուրախութիւն մը, որ պիտի ըլլայ Նաեւ ամբողջ ժողովուրդիկը» (Ղուկ. 2, 10-11), որպէսզի յոյսը արծարծեն մեր մէջ, հակառակ դժուարութիւններուն ու հալածանքներուն, ո-

րոնք բազմազան միջոցներով կը հետապնդեն քրիստոնեան ամենուրեք ու ամեն ժամանակ: Մեր յոյսը ամուր է Անով, որ խոստացաւ. «Ահաւասիկ ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի կատարածը» (Մատթ. 28, 20):

Ս. ԾՆՈՒՆԴԸ անսպասելի տօն մըն է, ուր անսովոր միջոցով մը Աստուած կը յայտնուի: Ան մեզ կը հրաւիրէ խղճի քննութեան ու կը յեղաշրջէ կեանքի ուղին. «Որքան նեղ է դուռը, անծուկ՝ ճամբան որ կը տանի դէպի կեանք, եւ քիչեր գայն կը գտնեն» (Մատթ. 7, 13-14):

Ս. ԾՆՈՒՆԴԸ տօնը չէ ամենազօր Աստուծոյ, որ ամենուրեք է որպէս հըսկող աչք ու հետապնդող, մարդոց գործած ամէն մէկ յանցանքին, խստօրէն պատժելու սայթաքումի պահուն: Ան տօնը չէ հեռաւոր վախազդու Աստուծոյ, որուն հզօրութենէն կ'երկնչինք ու ներկայութենէն կը խուսափինք, խիստ ու քըմահաճօրէն վարուելուն մեզի հետ: Ան իմաստուն Աստուածն է, որ մեզ սիրեց ու ստեղծեց, այսօր ալ՝ 25 Դեկտեմբեր 2018-ին, մեր մօտ, մեզի հետ կ'ապրի Ան, Էմմանուէլ, իսկ մենք՝ կարող ենք Չինք ճանչնալ ու սիրել:

Ս. ԾՆՈՒՆԴԸ մանուկի կերպարանքով Աստուծոյ յայտնութեան տօնն է, խանձարուրով փաթթուած ու դրուած մտւորին մէջ: Յայտնութիւնն է Աստուծային անհուն Սիրոյն, մեզ ձգելով փնտռողի ճամբուն վրայ ու խնդրելով մեզմէ հաւատալ Իրեն, յուսալ ու սիրել Չինք:

Ծնունդը յայտնութիւնն է Աստուծոյ, երկնքի եւ երկրի Արարիչին, որ իջեւանի մէջ տեղ չունի, յայտնութիւնն է փախստականին, տակաւին մանուկ, հետապնդուած ահաբեկիչ Յերովդէսէն, օտար ափերուն վրայ արքորականին ու գաղթականին: Ծնունդով, Աստուած յայտնուեցաւ իւրաքանչիւրիս, չարչարակից մեր ցաւերուն, շալկելով մեր խաչերն ու դառնութիւնները, մինչ

մենք կը կարծենք, թէ Ան հրաժարած է մեզմէ ու հեռացած:

Ծնունդը յայտնութիւնն է Աստուծոյ, Բարի Յովիւին, որ ստեղծեց իր արարածները ու անոնց պարգեւեց թանկագին իմաստութիւնն ու կա՛մքը: Իսկ երբ մարդիկ վատաբար օգտագործեցին զանոնք, Ան կանխեց ու փնտռեց զիրենք իրենց առանձնութեան ու մեղքի խաւարին մէջ: Ան կրկին հրահրեց յոյսը անոնց հոգիներուն մէջ: Բարի Յովիւն է, ո՛չ հալածող, այլ մարդոց հանգիստին հսկող:

Ծնունդը տօնն է գթած ու ողորմած Աստուծոյ, որ չի մոռնար մեզ նոյնիսկ եթէ մեր մայրը մեզ մոռնայ, ինչ որ անկարելի բան է: Եթէ իր դէմ մեղանչենք, Ան, արցունքը աչքերուն՝ մեր վերադարձին կը սպասէ, կուրծքին կը սեղմէ ու մեզի կը վերադարձնէ Աստուծոյ զաւակի արժանապատուութիւնը:

Եղբայրներ՛, այս անել օրերուն, երբ կը մտահոգուինք «մահագր» լուրերէն, զորս լրագրողները ամէն օր կը տեղացնեն մեր վրայ: Չվախնանք ու չտատամսինք Աւետարանը ընթերցելու, որուն մէջ կը գտնենք յուսալի պատգամներ ու պատասխաններ, անդորր ու պայծառ ապագայի մը հեռանկարով: Աստուծոյ Խօսքը կեանք է գայն ապրողին համար, լուսաւոր Կանթեղ՝ յաւիտենականութեան ուղեւորութեան, եւ ապահովութիւնն է իրենց մօր գիրկը քնացող մանուկներուն:

Ընդունինք Բեթլեհեմի Մանուկ Յիսուսը ու մեր սիրտը բանանք Անոր: Չայն պիտի դարձնէ իր բնակավայրը: Այս վայրկեանէն սլացք տանք մեր հոգեկան ծննդեան պատմութեան, խոկանք աստուածային Մանկան խոնարհութեան ու հեզութեան մասին, որպէսզի մասնակցինք իր Սիրոյ փրկչական ծրագրին: